1909

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում։
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ետևից
5 Ներս է մտնում մի զըռ չոբան.
— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ։
— Ունեմ, ունեմ, չոբան ախպեր.
10 Ամանդ ո՞ւր է, ամանըդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սըհաթին քաշեմ տամ քեզ։

Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով
15 Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած։
— Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի։
Ճանճի վըրա, թաքուն-թաքուն,
20 Էս խանութի տիրոջ կատուն

Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը իսկույն ևեթ
Հաֆ է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում
Ու շըպըրտում։

— Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն,
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,—
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը
Տուր՝ թե կտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին։

— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունըս,
Իմ ապրո՛ւստըս, տե՛ղըս, տո՛ւնըս...
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆըլան-ֆըստան,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր աժդահակը,
Մեծագլուխ իր մահակը
Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փըռում։

— Ըսպանեցի՛ն... հա՛յ, օգնությո՛ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն

Զեն է տալի մեկը մյուսին.
— Հա՛յ, օգնությո՛ւն... ըսպանեցի՛ն...
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վըրից, գործի տեղից,
Ճիչով, լալով,
Հարայ տալով,—
Էլ հերն ու մեր.
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր տըղեք,
Զոքանչ, աներ,
Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...
Ինչ իմանաս էլ՝ ո՛վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձըգում,
Իր շան կողքին երկար ու մեկ։
— Դե՛, ձեր մեռելն եկեք տարեք։
Ու էստեղից բոթը գընում,
Գընում մոտիկ գյուղն է հասնում.
— Հե՛յ, օգնեցե՛ք,
Մեռած հո չեք,
Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շընաճանճի մի բուն

Քանդես, թողնես,
80 էն ճանճի պես
Ամբողջ գյուղով օրդու* կապում,
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Որը ձեռին մի հրացան,
85 Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փետով,
Որը ձիով, որը ոտով,
Որն անգըտակ, որը բոբիկ —
90 Դեպի դուշման գյուղը մոտիկ։
— Տո՛, էսպես էլ անիրավ գյո՛ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ գընում է առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սըրի։
95 Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ադաթին...
Գընա՛նք, զարկե՛նք,
Ջարդե՛նք, կրակե՛նք...
— Հա՛յ, հո՛ւյ, հառա՛ջ, դե՛ ձեզ տեսնե՛մ...

100 Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Էնքան ավել կատաղեցին,
105 Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,

---

*բանակ, հրոսակախումբ

Կորան, գընացին
Գետնին հավասար։

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից
110 Էսքան մոտիկ, սահմանակից
Էս գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի։
Մի տերության թագավորը,
Երբ լսում է էս բոլորը,
115 Արձակում է հրովարտակ
Ժողովըրդին իր հրպատակ.
— Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, ազնըվական —
Ամեն շարքին
120 Ու աշխարհքին,
Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Երբ մենք քընած էինք սիրով,
Մեր սահմանը մըտավ զոռով,
125 Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին։
Արդ, սըրահար ու հըրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
130 Պատվեր տըվինք մեր բանակին,
Թընդանոթով մեր ավերող
Ու Աստուծով Մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոսոխի։

135 Մյուսը նույնպես իրեն հերթին
Գըրեց զորքին, ժողովըրդին.

— Մարդկանց առաջ և Աստծու,
Բողոքում ենք մեր դըրացու
Վարմունքի դեմ և չար, և նենգ,
Որ ոտքելով ամեն օրենք,
Բորբոքում է կըռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած։
Արդ՝ ակամա մենք ըստիպված,
Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն Աստծու և իր փառքի —
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վըրա։
Ու ըսկսեց կըռիվն ահեղ։
Շռինդ, որոտ էստեղ, էնտեղ։
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձըմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան,
Ու, կըռիվը չըդադարած,
Սովը եկավ համատարած։
Սովը եկավ — սովի հետ ցավ,
Ծաղկած երկիրն ամայացավ...
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ։